Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական ծախսերը պետք է կատարվեն փաստացիորեն անհրաժեշտաբար և, որ դրանց քանակը ողջամիտ է (տե՛ս, Ֆիլիպն ընդդեմ Հունաստանի թիվ 1 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռը, Շարքեր Ա, էջ 25, կետ 74, կամ Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի 1988 թվականի մարտի 25-ի վճիռը)։

Դատարանն արձանագրում է, որ «Ս Մոթորս» ՍՊԸ-ի և «Հովսեփյան Իրավաբանական Ընկերություն» ՍՊԸ-ի միջը 02.02.2026 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 4.1 կետի համաձայն՝ ծառայության արժեքը կազմել է 300.000 ՀՀ դրամ։

Սույն գործով Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է հայցադիմում, ապացույցներ, դիրքորոշում, գործը քննվել է գրավոր ընթացակարգով։

Դատարանն ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, նկատի ունենալով, որ հայցը բավարարվում է, գտնում է, որ սույն գործով հայցվոր կողմի փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը կազմում է 200.000 ՀՀ դրամ, ուստի պետք է «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ից հօգուտ «Ս Մոթորս» ՍՊԸ-ի պետք է բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար։

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Ս Մոթորս» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ Գևորգ Սարգսյան Աղասու ԱՁ-ի՝ գնահատող հանձնաժողովի նիստի որոշումներն անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանք պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել.

անվավեր ճանաչել «ԵԱ-ԳՀԾՁԲ-25/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 13.01.2026 թվականին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ հայցվոր «Ս Մոթորս» ՍՊԸ-ի ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելու, նույն ընթացակարգը կասեցնելու, մինչև 14.01.2026 թվականի ժամը 18:00-ն ներառյալ նույն ընթացակարգի հրավերին հայցվոր «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու մասին վերջինիս ծանուցելու և նույն հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամը 14.01.2026 թվականի ժամը 18:00-ն սահմանելու մասին որոշումները,

անվավեր ճանաչել «ԵԱ-ԳՀԾՁԲ-25/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունվարի 26-ին (նիստի արձանագրություն թիվ 4) ընդունված՝ նույն ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայցվոր «Ս Մոթորս» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և այն մերժելու, նույն չափաբաժինների մասով անհատ ձեռնարկատեր Գևորգ Աղասու Սարգսյանի հայտը բավարար գնահատելու, նույն չափաբաժինների մասով անհատ ձեռնարկատեր Գևորգ Աղասու Սարգսյանին ընտրված մասնակից հայտարարելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները,

պարտավորեցնել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին «ԵԱԳՀԾՁԲ-25/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայցվոր «Ս Մոթորս» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր:

2. «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ից հօգուտ «Ս Մոթորս» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ից հօգուտ «Ս Մոթորս» ՍՊԸ-ի բռնագանձել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE04-A8C7-4CD2-A03E հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am